

Տնտեսության զարգացման միտումները

2003 թվականի առաջին եռամսյակ

1. Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճը, 2003 թվականի առաջին եռամսյակում նույնպես, բավականին բարձր էր՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ իրական արտահայտությամբ աճելով 11.4 տոկոսով (ՀՆԱ-ի իրական աճի տարեկան ծրագիրը 2003 թվականի համար, համաձայն բյուջետային ուղերձի, կազմում է 6 տոկոս): Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 59 հազար դրամ կամ 100.7 ԱՄՆ դոլար՝ աճելով 10.1 տոկոսով: Նախորդ 12 ամիսների ընթացքում ստեղծված ՀՆԱ-ն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 12 տոկոսով իրական և 16.4 տոկոսով անվանական արտահայտությամբ:
2. ՀՆԱ-ի աճը հիմնականում ապահովվել է արդյունաբերության և շինարարության ճյուղերի հաշվին: 2003 թվականի առաջին եռամսյակում արդյունաբերական արտադրանքը աճել է 10.6 տոկոսով՝ ապահովելով ՀՆԱ-ի հավելածի 3.02 տոկոսային կետը: Առաջին անգամ նկատվում է արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակի աճ (1 տոկոս)՝ արտադրողականության աճի (9.4 տոկոս) պայմաններում: Մինևնույն ժամանակ նշենք, որ տեղի ունի ճյուղի համակենտրոնացան միտում: Այսպես, եթե նախորդ տարվա առաջին եռամսյակում Երևան քաղաքում արտադրվել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 32.6 տոկոսը, ապա այս տարի այն կազմել է 35.9 տոկոս: Կապիտալ շինարարությունը շարունակում է մնալ տնտեսական աճն ապահովող հիմնական ճյուղերից մեկը: Ունենալով համեստ տեսակարար կշիռ՝ 5.6 տոկոս, այն ապահովել է տնտեսական աճի 1.83 տոկոսային կետը (կամ 16.9 տոկոսը): Գյուղատնտեսության ներդրումը ՀՆԱ-ի աճի գործում շատ փոքր է՝ ընդամենը 0.77 տոկոսային կետ, որը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական դրսևորումներով, խոչընդոտելով գարնանացանի բնականոն ընթացքը, որը նախորդ տարվա համեմատ կատարվել է ընդամենը 21.5 տոկոսով:
3. Հունվար-մարտ ժամանակահատվածում գրանցվել 2.1 տոկոս սղաճ, որը միջին ամսական կազմում է 0.7 տոկոս: Սղաճը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, կազմել է 3.4 տոկոս, իսկ նախորդ 12 ամիսների ընթացքում՝ 3.2 տոկոս: 2003 թվականի սղաճի տարեկան ծրագիրը 3 տոկոս է, և ներկայումս այն հիմնականում մնում է ծրագրային մակարդակի վրա: ԱՄՆ դոլարի փոխարժեքը եռամսյակի վերջում կազմել է 589.5 դրամ, իսկ եռամսյակի միջինը՝ 586.6 դրամ, որը ենթադրում է, նախորդ տարվա նկատմամբ, հայկական դրամի (ԱՄՆ դոլարի նկատմամբ) անվանական արտահայտությամբ, համապատասխանաբար 2.2 և 3.4 տոկոս արժեզրկում:
4. 2003 թվականի առաջին եռամսյակում բյուջեի եկամուտները և գրանտները կազմել են 53.9 մլրդ դրամ, իսկ ընդհանուր ծախսերը 51.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով համապատասխանաբար 14.8 և -3.2 տոկոսով և կազմել տարեկան ծրագրային բյուջեի 18.8 և 15.5 տոկոսը: Նույն ժամանակահատվածում դրամարկղային հավելուրդը կազմել է 2.2 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1.1 տոկոսը, իսկ առաջնային հավելուրդը՝ 5.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.9 տոկոսը:
5. Արտաքին ապրանքաշրջանառությունն աճել է 20.1 տոկոսով: Ի տարբերություն նախորդ տարիների, այս եռամսյակում ներմուծման (նախորդ տարվա առաջին եռամսյակի նկատմամբ) աճի տեմպերը գերազանցել են արտահանման աճի տեմպերին՝ կազմելով 25.6 տոկոս, արտահանման 10.6 տոկոսի դիմաց: Ներմուծման աճի հիմնական մասը, կամ 15.9 տոկոսային կետը, պայմանավորված է թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ ապրանքախմբերի աճով:

6. Մշտական բնակչության թվաքանակը ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 3211.2 հազ. մարդ, կյանքի սպասվելիք տևողությունը՝ 73.5 տարի, մանկամահացությունը 1000 կենդանաձին երեխաների հաշվով՝ 11.3, մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը՝ 14.2, ուսման միջին տևողությունը՝ 10 տարի:
7. Համաձայն պաշտոնական տվյալների՝ գործազրկության մակարդակը մարտ ամսին կազմել է 9.1 տոկոս, մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 190 չգբաղված մարդ: Գործազրկության նպաստի միջին չափը 3127 դրամ է: